«01» 11 2022 թ. N 5032/01/5

ԵՐԱՇԽԻՔ N 22-0243
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք կամ կնքված թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/9» պայմանագրով նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 153,007,800.00 (մեկ հարյուր հիսուներեք միլիոն յոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:
4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 01/09/2023 թվականը ներառյալ:
6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում սպասարկվող թիվ 2500010873120100 հաշվարկային հաշվին:
7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/9» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

   Կանխավճարի շրջանակներում պրինցիպալի կողմից կատարվելիք աշխատանքների ժամկետների խախտման դեպքում բենեֆիցիարն իրավունք ունի հետ գանձել տրամադրված կանխավճարի չմարված մասը:
8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:
10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:
11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:
13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:
14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման և/կամ բավարարման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:
15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:
16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
18. Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

Գործադիր տնօրեն — Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ — Սեդրակ Բաղդասարյան